ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաոլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6 47 22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» մայիսի 2020 թվականի N 20

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 111-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝

   1) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4216 / գույքի և սարքավորումների վարձակալություն / պակասեցնել 1500.0 հազար դրամ:

   2) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ ավելացնել 200.0 հազար դրամ:

   2) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4251 / շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգում և պահպանում/ ավելացնել 1300.0 հազար դրամ:

   3) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ավելացնել 300.0 հազար դրամ:

5) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4841 /բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների փոխհատուցում/ պակասեցնել 300.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, մայիսի 22
գ. Մուսալեռ